

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԸ՝ ԽԱԳԻ ԿՆՔԱՀԱՅՐ (ՍՈՒՐԲԾՆԴՅԱՆ ՏՈՆԻ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ)



Հունվարի 6-ին Հայ առաքելական Եկեղեցին տոնում է աստվածորդու Սուրբ ծնունդն ու մկրտությունը: Տոնում է այդ լուս գիշերվա հիշատակը: Չկա ավելի լուսավոր տոն, քան Աստծո հայտնությունը մարդկանց:

Հունվարի 6-ին Հայ առաքելական Եկեղեցին տոնում է աստվածորդու Սուրբ ծնունդն ու մկրտությունը: Պատարագող քահանան սուրբ հոգու շնորհները խնդրեց Տիրոջ հանուն հոգևոր և մարմնական բժշկության, հանուն հայ ազգի վերքերի շուտափույթ բժշկման, Հայրենիքի վերաշինման և Խաղաղության:

հավիտենական կյանքի աղբյուր, որպես կենարար ջուր: Այնուհետև պաշտպանիչ աղոթքով դիմեց հավատավոր ներկաներին, աղոթեց անպարտելի Հայրենիք ունենալու համար և 3 անգամ ավետիսի ողջուն ուղղեց ներկաներին:

Քրիստոս ծնավ և հայտնեցավ: Մեզ և ձեզ մեծ ավետիս:

Այդ օրը Դոնի հայ համայնքի հազարավոր հավատացյալներ հուզմունքով ու երկյուղածությամբ այցելեցին հայկական եկեղեցիներ հաղորդակից լինելու Տիրոջ Օննության սուրբ պատարագին...

2000 տարի առաջ Փրկիչը ծնվեց: Բեթղեհեմի աստղը լուսավորեց մեղքերի մեջ թաղված աշխարհը: Փոխվեց մարդկությանը ընթացքը և պատմությունը բաժանվեց Քրիստոսից առաջ և Քրիստոսից հետո:

Լուս, խաղաղ բեթղեհեմյան գիշեր էր: Աշխարհի ամենակարևոր փոփոխությունը տեղի ունեցավ անկաստ, պարզ հովիվների փոքրիկ ստուրում: Մարդկության պատմությունը չարձանագրեց լույսի ծնունդը, բայց այդ օրը սկսվեց աշխարհի նոր տարեգրությունը:



Շատերի համար հաճելի անակնկալ էր այն, որ սուրբ Ջրօրհների խաչքավորը Դոնի հայ համայնքի ղեկավար Հարություն Մուրմայան էր սուրբ Հարություն եկեղեցում:


— Ես սիրով համաձայնեցի լինել այս Սուրբ օրվա խաչի կնքահայրը Խաչքավորը ինչպես ասում են: Երբ պատարագի ավարտից հետո սկսվեց Ջրօրհները, ես հագա շապիկ, գրկեցի սուրբ խաչը, պահեցի մինչև պատարագի վերջը այն և թաթախելով սուրբ ջրի մեջ օրհնեց ու սրբեց ջուրը սուրբ խաչով:

Շատ հանդիսությունների եմ մասնակցել, սակայն հայ եկեղեցու բնում լինել խաչքավորի պատվավոր դերում շատ տպավորիչ էր: Եվ այդ մաքրագործող զգացողությունը անջնջելի կմնա ընդմիջում:

Մեկ անգամ ես մեր համայնքին և հայ ազգին ամբողջ աշխարհում, մաղթում եմ խաղաղություն, առողջություն, քրիստոնեական Հույս ու Հավատ, և, որ Տիրոջ ծննդյան օրը սկիզբ դառնա նոր հաղթանակների ի փառս ծանր վերքերը ապաքինվող, փորձություններից ավելի ուժեղացած Հայաստանի Հանրապետության:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՎՀ-Ի ՌՈՍՏՈՎԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ ԱՏԱՑԱՆ ԿԿԱՅԱԿԱՆՆԵՐ



Հայոց լեզու (արևելահայերեն և արևմտահայերեն), հայոց պատմություն, հայկական մշակույթ (ճարտարապետություն և երաժշտություն), շախմատ. վիրտուալ համալսարանում կարելի է ընտրել այս ֆակուլտետներից մեկը: Դասընթացներն առաջարկվում են 7 լեզվով՝ հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն), անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն և թուրքերեն:

2011 թվականից ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանը համագործակցում է նաև Դոնի Ռոստովի հայկական համայնքի հետ: Դոնի Ռոստովում ՀՎՀ-ի



ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանը (ՀՎՀ) օնլայն կրթության հավատարմագրված հաստատություն է, որը նորագույն տեխնոլոգիաների միջոցով տրամադրում է հայագիտական կրթություն: Այն ժամանակակից կրթական նախագիծ է, որն աշխարհասփյուռ հայերին և այլազգիներին հնարավորություն է տալիս ստանալ հայկական կրթություն անկախ տարիքից, բնակության վայրից ու գիտելիքների մակարդակից: Այսօր ՀՎՀ-ն ունի 15000 գրանցված օգտատեր աշխարհի շուրջ 112 երկրից ԱՄՆ-ից մինչև Ռուսաստան, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Վենեսուելա, Արգենտինայից մինչև Արևադարձային Ռեյունյոն կղզի (Հնդկական օվկիանոս):



սեփյան): Ուսանողներին ՀՎՀ-ի վկայականները, համայնքի կողմից շնորհակալագրերը և նվերները հանձնեց ու իր ողջունի խոսքը հղեց Դոնի Ռոստովի հայ համայնքի գործադիր տնօրեն Սերգեյ Մայադովը:

«Սփյուռքի յուրաքանչյուր հայկական կրթօջախում ի պահ են հանձնված հայ լեզուն, հայ միտքը ու հայ խոսքը, ի պահ են հանձնված վստահությամբ ու հավատով: Այս կրթօջախի յուրաքանչյուր աշակերտ գտնում է մի կտոր Հայաստանից ու հայի ներաշխարհից:

Հայեցի դաստիարակությունը պետք է լինի ոչ թե սուկ խոսք, այլ երևույ, որից ծնվում են հայրենասիրությունն ու մարդասիրությունը, ազգասիրությունն ու խիզախությունը: Այստեղ դաստիարակություն ամպլվոր է անվերապահորեն շաղկապված է ազգայնապանության հետ, որովհետև միայն հայրենասիրությամբ ու ազգասիրության ոգով կրթվածները վստահորեն կարող են իրենց վրա վերցնել հայ մնալու պատասխանատվությունը: Այս առումով սփյուռքի ուսուցիչն էլ ունի այնպիսի մի առաքելություն, որ իր մեջ փառք ու պատիվ բովանդակելուց բացի նաև պարտք ու պայտասխանատվություն ունի թե ազգի, թե նրա սանցյալի ու ապագայի պատմության առաջ:

Մաղթում եմ արդյունավետ աշխատանք ի շահ հայ դպրոցի, հայ լեզվի և հայ ինքնության», — ասաց Սերգեյ Մայադովը:

Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ

հիբրիդ կրթության ծրագրի առցանց դասընթացներով հայերեն են սովորում տասնյակ աշակերտներ, ուսանողներ: Հիբրիդ ուսուցումը ավանդական և օնլայն ուսուցման մեթոդների և միջավայրի խառնուրդ է, լավ արդյունքներ է ապահովում և այսօր աշխարհում շատ տարածված է:

Վերջերս ՀՎՀ-ի Ռոստովի մասնաճյուղում տոնական տրամադրություն էր: Դասընթացի սկսնակ և տարրական մակարդակները (AL103, AL113) հաջողությամբ հաղթահարած 18 ուսանող ստացան ՀՎՀ-ի վկայականներ (օնլայն-ինստրուկտոր Գոհար Գևորգյան, ուսուցչուհի Արմինե Հով